Ucom x Music Fest With Coca-Cola համագործակցության շրջանակներում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ucom x Music Fest With Coca-Cola համագործակցության շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները:

1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինքային միջոցառում:

1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.5. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող, 18 տարին լրացած ֆիզիկական անձինք:

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 2025 թվականի օգոստոսի 21-ից 2025 թվականի օգոստոսի 28-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում՝

- բաժանորդագրվել Uplay ինստագրամյան էջին (follow),
- հավանել (like) ամրացված հրապարակումը (pinned post),
- մեկնաբանությունների դաշտում նշել այն անձին ում հետ ցանկանում են մասնակցել Music Fest With Coca-Cola փառատոնին:

3.2. Նույն օգտահաշվից Խաղարկության ընթացքում մի քանի անգամ մեկնաբանություն թողնելը՝ **չի սահմանափակվում, սակայն հաղթող հնարավոր է ճանաչվել միայն մեկ անգամ**:

3.3. Խաղարկությունը կամփոփվի օգոստոսի 29-ին Uplay-ի ինստագրամյան պաշտոնական էջում՝ uplay_armenia:

3.4. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Randomizer առցանց հարթակի միջոցով:

3.5. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 25 հոգի: Յուրաքանչյուր հաղթող ստանում է Music Fest with Coca Cola փառատոնի երկուական տոմս:

3.6. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին Uplay-ի ինստագրամյան պաշտոնական էջից անհատապես կուղարկվեն հաղորդագրություններ՝ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու վերաբերյալ։Այնուհետև նույն պաշտոնական էջի միջոցով հաղորդագրությամբ կտրամադրվեն տոմսերը՝ QR կոդերի տեսքով ։

3.7. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ։

3.8. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում։

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անց է կացվելու **2025 թվականի օգոստոսի 21-ից 2025 թվականի օգոստոսի 28-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում։

4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.3-րդ կետով սահմանված կարգով։

5. Նվերների ցանկը

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ
Music Fest With Coca-Cola փառատոնի երկուական տոմս	25

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն,
գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., շ. 8/4,
պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am
պաշտոնական սոցիալական էջեր՝
https://www.facebook.com/UcomArmenia
https://www.instagram.com/ucom_official
https://www.instagram.com/uplay_armenia/

հեռախոսահամար՝ +374 (11) 444 444